ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

19 հուլիսի ուրբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

99
(2949)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐԸ

Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը պաշտոնի նշանակվել է 2021 թվականի օգոստոսի 2-ին: Գնել Սանոսյանը մինչեւ 2018 թվականի հեղափոխությունը որեւէ կապ չի ունեցել քաղաքականության հետ, սակայն 2018 թվականի մայիսին՝ Նիկոլ Փաշինյանի վարչապետ ընտրվելուց հետո, մինչեւ նույն թվականի հոկտեմբեր զբաղեցրել է ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալի պաշտոնը: Փոխնախարարի պաշտոնը լքելուց հետո՝ Սանոսյանը 2018-2021 թվականներին եղել է ՀՀ Գեղարքունիքի մարզպետ, ապա 2021 թվականի օգոստոսին նշանակվել է տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարի պաշտոնում:

Գնել Սանոսյանը 2023 թվականի՝ անշարժ գույքի, եկամուտների, շահերի եւ ծախսերի հայտարարագրում անշարժ գույք չի հայտարարագրել, սակայն 2021 թվականի հայտարարագրում տեսնում ենք, որ Սանոսյանն ունի 3 հողամաս եւ 1 անհատական բնակելի տուն Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքում: 2022 թվականի հայտարարագրից հասկանում ենք, որ Սանոսյանը նախորդ տարի սեփականության իրավունքով իրեն պատկանող 4 անշարժ գույքը նվիրատվությամբ փոխանցել է եղբորը՝ Վահան Սանոսյանին:

Նախարար Գնել Սանոսյանի բանկային հաշիվների մնացորդները տարեսկզբին կազմել են 2 մլն 916 հազար դրամ, տարեվերջին՝ դարձել 830 հազար դրամ:

Կանխիկ դրամական միջոցները տարեսկզբին կազմել են 150 հազար ռուբլի եւ 7,2 մլն դրամ, տարեվերջին՝ 10 մլն դրամ:

ՏԿԵ նախարարի՝ հաշվետու տարվա եկամուտները կազմել են 26 մլն 289 հազար դրամ, որից 19 մլն 770 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ ՏԿԵ նախարարությունից: Նախարարը դասախոսական աշխատանքի համար «ՄԱՐՏԻԳ» Արտաքին տնտեսական կապերի համալսարանից ստացել է 10 հազար դրամ աշխատանքի վարձատրություն:

Նախարարը 2023 թվականին եղբորից՝ Վարդան Հենզելի Սանոսյանից, ստացել է 1 մլն ռուբլի գումար:

Սանոսյանի՝ հանգստի համար կատարած ճանապարհածախսերը կազմել են 4,2 մլն դրամ, վարկերի մարմանն ուղղել է 6 մլն դրամ:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:



«Սարգիս Կարոլինա» ընկերության հիմնադիր եւ գլխավոր տնօրեն Սարգիս Թարվերդյանը երեկ՝ հուլիսի 18-ին, վարչապետի տիկնոջ՝ Աննա Հակոբյանի «Իմ քայլը» հիմնադրամի նամակ-պահանջով 10 մլն դրամի նվիրատվություն է արել հիմնադրամին: Այս տեղեկությունը հաստատեցին նաեւ «Իմ քայլը» հիմնադրամից՝ հավելելով, որ փոխանցումը արվել է ոչ թե ընկերության, այլ անձամբ գործարարի անունից: Իր հերթին էլ, Սարգիս Թարվերդյանն ասաց, թե սրտանց է դա արել. «Երբ մարդ բարեգործություն է անում, իր խղճի, իր Աստծո համար է անում՝ իր ազգին ու երկրին օգուտ տալու համար»: Հարցին՝ վարչապետի տիկնոջ հիմնադրամից ուղարկված նամակի պահանջո՞վ է գումարը փոխանցել, Թարվերդյանը արձագանքեց. «Եկեք՝ չպատասխանեմ. եթե ուղարկում են, լավ են անում, ստանում ենք՝ լավ ենք անում: Դա իմ սահմանադրական իրավունքն է, ստանալ նամակ, ինչ-որ բան անել: Դա իմ իրավունքն է, ես, ի սրտե, ուրախ եմ, որ օգտակար եմ եղել ինչ-որ բանով»: Հավելենք, որ Շրի Լանկայում Հայաստանի Հանրապետության պատվավոր հյուպատոս Սարգիս Թարվերդյանը «Արարատ» սննդի կոմբինատի 65 % բաժնետոմսերի սեփականատերն է եւ Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միության խորհրդի անդամը:

Քաղաքական ընդդիմադիր դաշտը պատրաստվում է սեպտեմբերյան եռուզեռին: Ինչպես արդեն հայտնել ենք՝ Բագրատ Սրբազանի գլխավորած շարժումը պատրաստվում է աշնանը նոր թափով վերսկսելու հանրահավաքները եւ ակցիաները: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ քննարկվել է, որ շարժման հիմնական մարտավարությունը լինելու է երիտասարդությանը եւ տարբեր ոլորտների կարկառուն ներկայացուցիչներին, այլ կերպ ասած՝ ազգի հիմնական շարժիչ ուժին գործողությունների մեջ ներգրավելը: Հենց այդ նպատակով էլ Բագրատ Սրբազանը, մարզեր այցերին զուգահեռ, այս օրերին փակ հանդիպումներ է ունենում դասախոսների, մշակույթի եւ այլ ոլորտների տարբեր ներկայացուցիչների հետ, որպեսզի սեպտեմբերից շարժումը ավելի ընդլայնվի, եւ զուտ քաղաքական պայքարից դառնա համաժողովրդական: Դե իսկ ընդդիմադիր քաղաքական ուժերի տարբեր ներկայացուցիչների եւ փորձագետների հետ հանդիպումները պարբերական բնույթ են կրում: Նշենք, որ սեպտեմբերից, հանրահավաքներին եւ ակցիաներին զուգահեռ, ԱԺ նիստերը նույնպես սկսվում են, եւ քաղաքական թեժ մթնոլորտը առաջիկայում ապահովված կլինի:

Ազգային ժողովի՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Սոնա Ղազարյանը խորհրդարան է եկել 2021 թվականի հունիսի 20-ին կայացած արտահերթ խորհրդարանական ընտրություններից հետո: Մինչ այդ՝ 2018 թվականի սեպտեմբերից միչեւ 2019 թվականի հունվար, եղել է Երեւանի ավագանու անդամ՝ «Իմ քայլը» կուսակցությունների դաշինքով: Սոնա Ղազարյանի քաղաքական կարիերան սկսվել է հենց հեղափոխությունից հետո. այն բարենպաստ էր Ղազարյանի համար: Համաձայն պատգամավորի՝ 2023 թվականի անշարժ գույքի, եկամուտների, շահերի եւ ծախսերի հայտարարագրի՝ Սոնա Ղազարյանը հայտարարագրել է 2020 թվականին համատեղ սեփականությամբ ձեռք բերված բնակարան, որը գտնվում է Կոտայքի մարզի Առինջ գյուղում: Տրանսպորտային որեւէ միջոց պատգամավորը չի հայտարարագրել: ԱԺ ՔՊ-ական պատգամավորի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 2,5 մլն դրամ, հաշվետու տարվա եկամուտները՝ 12 մլն 219 հազար դրամ: Հաշվետու տարվա եկամուտներից 10 մլն 102 հազար դրամը աշխատանքի վարձատրություն է ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմից: Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը, հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ, կազմել է 24 մլն 373 հազար դրամ, որը բնակարանի հիփոթեքի մայր գումարի մնացորդն է, որի համար էլ Ղազարյանը ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացել է 2 մլն 117 հազար դրամ, որն էլ եկամտահարկի վերադարձի օրենքով հիփոթեքի մայր գումարի մնացորդն է:

ԶՐՈՒՅՑ

«ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ Է ԶՈՒՏ», ԲԱԴԱԼՅԱՆ

Տարիներ տեւած բանակցություններից հետո՝ հուլիսի 17-ին Եվրամիությունը անդամ բոլոր երկրների դեսպանների մակարդակով ի վերջո հավանություն տվեց Հայաստանի հետ վիզաների ազատականացման շուրջ բանակցություններ սկսելու՝ Եվրահանձնաժողովի առաջարկին, այս մասին հայտնել էր «Ազատություն»-ը:

«Ժողովուրդ» օրաթերթը սրա շուրջ զրուցել է քաղտեխնոլոգ Արմեն Բադալյանի հետ:

-Պարոն Բադալյան , գիտենք, որ վիզաների ազատականացման գործընթացը, առհասարակ, բավականին երկար է տեւում, եւ այդքան էլ հեշտ գործընթաց չէ: Խնդրում ենք՝ որպես քաղտեխնոլոգ մեկնաբանեք, թե որքանո՞վ եք հավանական համարում: Ի՞նչ գործընթացներ պետք է լինեն այս մասով եւ որքա՞ն ժամանակում սա իրականություն կդառնա:

-Շատ պրոտոկոլներ կան: Ազատ վիզայի ռեժիմի սահմանումը դեռեւս չի նշանակում, որ ով, երբ ուզի, կարող է գնալ ԵՄ որեւէ պետություն եւ որքան ցանկանա՝ մնա այնտեղ: Պետք է միանգամից ընդունվի վերադարձի ժամկետի սահմանման օրենք: Անձը որոշակի ժամանակով մեկնում է, եւ երբ այդ սահմանված վերադարձի ժամկետը լրանա՝ պետք է վերադառնա, հակառակ դեպքում կվտարվի եւ մուտքը ԵՄ տարածք կարգելվի:

Այսինքն՝ սա զուտ «Փի Ար» նշանակություն ունի, քան իրական, քանի որ այսօր էլ ԵՄ տարածքի որեւէ պետություն մեկնել ցանկացողները կարող են հանգիստ գնալ եւ վերադառնալ. իսկ այնտեղ աշխատանք ունենալու համար պետք է շատ դժվար գործընթաց անցնի անձը:

Առհասարակ, վիզաների ազատականացման հարցը երկար տարիների տեւական գործընթաց է, կարող է տասնհինգ քսան տարի տեւել, իսկ, թե ինչ կլինի Հայաստանի հետ այդ ընթացքում, ոչ ոք չգիտի: Կամ առհասարակ Հայաստանը կլինի, թե ոչ...:

-Այսինքն, Ձեր դիտարկմամբ, սա հերթական «Փի Ար» գործողությո՞ւնն է իշխանությունների կողմից՝ մեր հասարակության համար:

-Այո՛, իշխանությունը փորձում է ժողովրդին ցույց տալ, որ հիմա վիզաներն ազատականացնում ենք, վաղը գնալու ենք Եվրոպա ու Փարիզի կենտրոնում մեզ համար սուրճ խմենք: Եվ դա գինն էր՝ Արցախը հանձնելու:

-Անդամ 27 երկրների հավանությունից հետո հարցը պետք է դեռ հաստատման կդրվի ԵՄ Խորհրդում, ապա կփոխանցվի Եվրահանձնաժողովին. ըստ Ձեզ՝ որքան կտեւի այս գործընթացը:

-Երկար բանակցություններ, Արցախի հարցի ամբողջական լուծում, խաղաղության պայմանագրի ստորագրում: Իհարկե, դա չեն ասում, սակայն ավելի քան հստակ է, քանի որ Եվրոպական միությունը չի ցանկանում պատերազմող պետությունների հետ նման պայմանագրեր կնքել: Հետեւաբար այս ամբողջ խաղաղության գործընթացի փաթեթը պիտի ավարտվի եւ դրանից հետո տեսնենք՝ կկնքի, թե ոչ:

Հնարավոր է բանակցություններ սկսվեն եւ տեւեն երեսուն տարի, սակայն հենց այս իշխանությունը փոխվի, այդ հարցը կփակվի, քանի որ հաջորդող իշխանությունը գալու է Արցախն ազատագրելու: Ինչից հետո, իհարկե, Եվրոպական միությունն այդ հարցը նորից փակելու է. սա տարիներ պահանջող աշխատանք է:

-Ըստ Ձեզ՝ ԵՄ անդամ բոլոր պետությունները կհամաձայնե՞ն Հայաստանի հետ վիզաների ազատականացմանը, կհաստատե՞ն որոշումը:

-Դա էլ է դեռ քննարկման առարկա: Հենց դրա համար էլ սա տասնյակ տարիներ ձգվող գործընթաց է, իսկ մենք չգիտենք՝ հինգ օր հետո Հայաստանը կլինի, թե ոչ: Սա միայն ներքին «Փի Ար»-ի համար է:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶՐԿԵԼ Է ՀԱՄԱՐԱՆԻՇՆԵՐԻՑ

Հայոց առաքելական եկեղեցու դեմ արշավը շարունակվում է:

Բագրատ Սրբազանին բացահայտ աջակցություն հայտնելուց հետո՝ Հայաստանի իշխանությունները զրկել են ՀԱԵ Վիրահայոց թեմին՝ կարմիր եւ կանաչ պետհամարանիշներից:

Վրաստանի Հայ համայնքի ներկայացուցիչ Արթուր Միրզոյանը ArmLur.am-ի հետ զրույցում պատմում է.

«Մոտ մեկ ամիս է՝ նման խոսակցություններ կան, բայց վերջին օրերին հստակ իմացել եմ, որ զրկել են Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս եպիսկոպոս Դավթյանին, փոխառաջնորդին կարմիր համարանիշներից, իսկ Աջարիայի, Նինոծմինդայի եւ Ախալքալաքի հոգեւոր հովիվներին կանաչ համարանիշներից:

Պաշտոնապես որեւէ բացատրություն չի եղել, բայց ես համոզված եմ, որ դա կապված է այն բանի հետ, որ Վիրահայոց թեմն իր բացահայտ աջակցությունը հայտնեց «Տավուշը հանուն հայրենիքի» շարժմանը եւ Բագրատ Սրբազանին: Այդ հայտարարությունից որոշ ժամանակ անց նման որոշում է կայացվել:

Ինչպես Սփյուռքում էին տարբեր միջոցառումներ անցկացնում՝ շարժմանն աջակցող, մենք էլ Տեր հոր հետ Թբիլիսում անցկացրինք, եւ թեմի առաջնորդն էլ աջակցող ելույթով հանդես եկավ»:

Արթուր Միրզոյանը հավելում է՝ մինչ Հայաստանի իշխանությունները Վիրահայոց թեմին զրկում են կարմիր պետհամարանիշներից՝ Ադրբեջանը Վրաստանում իր բոլոր աշխատակիցներին բաժանում է այդ համարանիշները:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ՎԻԶԱՆԵՐԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՄԱՆԸ

Երեկ Բրյուսելում ԵՄ անդամ երկրների դեսպանները հավանություն են տվել ԵՄ արտաքին գործերի նախարարների խորհրդի հաջորդ նիստի օրակարգին եւ որոշումների նախագծերին, որոնց թվում է նաեւ Հայաստանի հետ վիզաների ազատականացման շուրջ երկխոսության մեկնարկի՝ Եվրոպական հանձնաժողովի առաջարկը:

Ընդգծենք, որ երկխոսության մեկնարկի վերաբերյալ վերջնական որոշման հաստատումն անդամ երկրների ԱԳ նախարարների մակարդակով ԵՄ խորհրդի իրավասությունն է, եւ այդ ձեւաչափով հաջորդ նիստը նախատեսվում է երկուշաբթի՝ հուլիսի 22-ին:

ՓԱՇԻՆՅԱՆԸ՝ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆԸ

Նիկոլ Փաշինյանը Միացյալ Թագավորությունում՝ Բլենհայմյան պալատում մասնակցում է Եվրոպական քաղաքական համայնքի 4-րդ գագաթնաժողովին:

Նախ տեղի է ունեցել պատվիրակությունների ղեկավարների դիմավորման արարողությունը: ՀՀ վարչապետին եւ մյուս երկրների առաջնորդներին դիմավորել է Մեծ Բրիտանիայի վարչապետ, սըր Քիր Սթարմերը:

Այնուհետեւ տեղի է ունեցել միջոցառման բացման եւ մասնակիցների տեսալուսանկարահանման արարողությունը:

Միջոցառման շրջանակում վարչապետը շարունակում է երկկողմ հանդիպումներ ունենալ այլ երկրների գործընկերների հետ:

ԱԱԾ-ԻՆ ՀԱՏԿԱՑՎԵԼ Է 409 ՄԼՆ ԴՐԱՄ

Կառավարությունն իր երեկվա՝ հուլիսի 18-ի նիստում որոշեց 2024-ի բյուջեով հատկացված կառավարության պահուստային ֆոնդից 409 մլն 639 հազար դրամ ուղղել Հայաստանի ԱԱԾ-ին:

Որոշման հիմնավորման մեջ նշվում է, որ այս որոշման ընդունումը պայմանավորված է ազգային անվտանգության մարմինների բնականոն գործունեության ապահովման անհրաժեշտությամբ:

Այս որոշման արդյունքում առավել արդյունավետ կիրականացվեն ծառայության առջեւ դրված խնդիրների լուծման աշխատանքները:

ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ Է ԵԽ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Հայաստանի արտգործնախարար Արարատ Միրզոյանը «Իքսի» իր էջում հայտնել է, որ միանում է գործընկերների՝ Ռոբերտա Մեցոլային ուղղված շնորհավորանքներին, Եվրախորհրդարանի նախագահի պաշտոնում տպավորիչ վերընտրության համար:

«Եվրախորհրդարանը կարեւոր դեր է խաղում Հայաստան-ԵՄ ամուր գործընկերության օրակարգի, տարածաշրջանային խնդիրների առաջխաղացման գործում, եւ մենք անհամբեր սպասում ենք այդ ճանապարհի շարունակությանը»,- գրել է Միրզոյանը:

ՍՊԱՌՆԱԼԻՔ ՉԻ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ

Ռուսաստանը ոչ մի սպառնալիք չի ներկայացնում ոչ մեկի համար Եվրամիությունում, երկիրն Ուկրաինայում պաշտպանում է իր շահերը: Այս մասին լրագրողներին հայտնել է ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը, տեղեկացրել է ՏԱՍՍ-ը:

«Ռուսաստանի Դաշնությունը չի ներկայացրել եւ չի ներկայացնում որեւէ սպառնալիք ոչ մեկի համար Եվրոպական միությունում եւ Ուկրաինայում պաշտպանում է իր շահերն այն պայմաններում, երբ Եվրամիության երկրները բացառել են երկխոսության եւ Ռուսաստանի մտահոգության հաշվառման որեւէ հնարավորություն»,- ասել է նա:

Ավելի վաղ Եվրահանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենը հայտնել էր ԵՄ-ը պաշտպանական միության վերածելու պլանների մասին: Մեկնաբանելով նրա խոսքերը՝ Պեսկովը նշել է, որ դա ստիպում է Ռուսաստանին համապատասխան ձեւով դասավորել իր արտաքին քաղաքական մոտեցումները:

Մեկնաբանելով Եվրահանձնաժողովի ղեկավարի նախաձեռնությունը՝ Կրեմլի ներկայացուցիչն ասել է. «Սա եւս մեկ անգամ հաստատում է եվրոպական պետությունների վերաբերմունքը ռազմականացման, լարվածության սրման, առճակատման եւ իրենց արտաքին քաղաքականության մեջ առճակատման մեթոդներին ապավինելու նկատմամբ»:

«Դժվար է այստեղ որեւէ համապարփակ մեկնաբանություն տալ, բայց պարզ է, որ այդ աշխատանքը հատվելու է այն փոխգործակցության հետ, որը ԵՄ երկրներն ունեն Հյուսիսատլանտյան դաշինքի շրջանակներում»,- հավելել է ՌԴ նախագահի մամուլի քարտուղարը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԱՅՑ՝ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանից հայտնում են. «Վարչական շրջանում գործող կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակում, սույն թվականի հուլիսի 17-ին կազմակերպվել է Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավար Արտակ Հովակիմյանի այցը Դրոյի 22/5 հասցեում գործող «Հուսո տուն բարեգործական կենտրոն» հիմնադրամ:

Այցի ընթացքում վարչական շրջանի ղեկավարը ծանոթացավ «Հուսո տուն բարեգործական կենտրոն» հիմնադրամի ընթացիկ ծրագրերին:

Արտակ Հովակիմյանը անմիջական ու ջերմ զրույց ունեցավ «Գթության խոհանոց» ծրագրի շահառուների, ինչպես նաեւ «Հույսով լի եւ առողջ մանկություն» ծրագրի երեխաների հետ»:

ՀՀ-ԵՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՈՒՄ

Եվրոպական քաղաքական համայնքի 4-րդ գագաթնաժողովի շրջանակում տեղի է ունեցել վարչապետ Նիկոլ Փաշինյանի հանդիպումը Ֆինլանդիայի նախագահ Ալեքսանդր Ստուբի հետ:

Զրուցակիցները քննարկել են Հայաստան-Ֆինլանդիա հարաբերությունների հետագա զարգացմանն ու ընդլայնմանը վերաբերող հարցեր: Մասնավորապես, կարեւորվել է տնտեսական փոխգործակցության ընդլայնման ուղղությամբ հետեւողական քայլերի իրականացումը:

Նիկոլ Փաշինյանը եւ Ալեքսանդր Ստուբն անդրադարձ են կատարել Հայաստան-Եվրոպական միություն համագործակցության խորացմանը, մեր երկրում իրականացվող ժողովրդավարական բարեփոխումներին, ինչպես նաեւ Հայաստան-Ադրբեջան խաղաղության գործընթացին եւ տարածաշրջանային անվտանգությանը վերաբերող հարցերի:

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԿՈՂՄԸ ՄԵՐԺԵԼ Է

ՀՀ ԱԳՆ-ն մեկնաբանել է Միացյալ Թագավորությունում Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հնարավոր հանդիպման չկայանալը:

«Հայկական կողմն առաջարկել է Հայաստանի վարչապետի եւ Ադրբեջանի նախագահի երկկողմ հանդիպում ունենալ ՄԹ-ում ընթացող Եվրոպական քաղաքական համայնքի գագաթաժողովի շրջանակներում, սակայն ադրբեջանական կողմը մերժել է առաջարկը: Հայկական կողմի առաջարկն ուժի մեջ է: Հայկական կողմը նաեւ վերահաստատում է իր առաջարկը՝ ինտենսիվացնել բարձր եւ բարձրագույն մակարդակով բանակցությունները եւ մեկ ամսվա ընթացքում հասնել խաղաղության պայմանագրի ստորագրմանը», - ասել է ՀՀ ԱԳՆ մամուլի խոսնակը:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ԶԱՐՈՒՀԻ ԲԱԹՈՅԱՆԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության համաժողովական ընտրական ցուցակով 2021 թվականին Ազգային ժողովի պատգամավոր է ընտրվել Զարուհի Բաթոյանը:

Բաթոյանը մինչեւ 2018 թվականի հեղափոխությունը համագործակցել է մի շարք հասարակական կազմակերպությունների հետ՝ որպես փորձագետ: 2018-2019 թվականներին՝ հեղափոխությունից հետո, եղել է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալ, ապա 2019-2020 թվականներին՝ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար:

2021 թվականից ԱԺ պատգամավոր է եւ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ:

Զարուհի Բաթոյանի՝ 2023 թվականի անշարժ գույքի, եկամուտների, շահերի եւ ծախսերի հայտարարագրի համաձայն՝ պատգամավորը 2014 թվականին միանձնյա սեփականությամբ ձեռք է բերել բնակարան բազմաբնակարան բնակելի շենքում, որը գտնվում է Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում:

ԱԺ պատգամավորի բանկային հաշիվների մնացորդները կազմել են գրեթե 12,5 մլն դրամ: Նրա՝ հաշվետու տարվա եկամուտները կազմել են 11 մլն 327 հազար դրամ, որից 10 մլն 107 հազարը աշխատանքի վարձատրություն է ՀՀ ԱԺ աշխատակազմից, իսկ 587 հազար դրամը կենսաթոշակ է աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից: Սեռական եւ վերարտադրողական իրավունքի եվրոպական պառլամենտական ֆորումում կատարած աշխատանքի համար Բաթոյանը ստացել է 72 հազար դրամ աշխատանքի վարձատրություն:

Բաթոյանը «Արդշինբանկ»-ից եւս ստացել է եկամուտ՝ 559 հազար դրամ:

Հիշեցնենք, որ ՀՀ ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության երեք պատգամավորները՝ Զարուհի Բաթոյանը, Սոնա Ղազարյանը եւ Ծովինար Վարդանյանը նախագծերի փաթեթ են ներկայացրել, որը հասարակության շրջանում եւ սոցցանցերում մեծ աղմուկ է բարձրացրել:

Փաթեթում կար կետ՝ կուսության ստուգումն արգելելու մասին: Կանայք առաջարկում էին փաթեթում ներմուծել նաեւ «զուգընկեր» հասկացությունը, որով, ըստ որոշ քաղաքացիների, քողարկված պաշտպանության տակ էին առնում նույնասեռականներին: Այս նախագծով առաջարկվում էր նաեւ բռնությունից պաշտպանել այն զուգընկերներին, որոնք ամուսնացած չեն, սակայն նշանված են կամ հանդիպում են: Պատգամավորների հեղինակած՝ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության եւ ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ու կից օրենքներում եւ մի շարք օրենսգրքերում փոփոխություններ եւ լրացումներ նախատեսող օրենսդրական փաթեթը առաջին ընթերցմամբ ընդունվեց:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՄՆ ԴԵՍՊԱՆԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

«Հաճելի էր հանդիպել իմ հայրենի Կալիֆորնիայից ժամանած ամերիկահայ զինվորականներին, որոնք «Արծիվ գործընկեր» զորավարժության ընթացքում հանդես են գալիս որպես թարգմանիչներ»:

Այս մասին գրառում է արել ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Քրիստինա Քվինը՝ շնորհակալություն հայտնելով ծառայության համար:

Հիշեցնենք, որ միջազգային խաղաղապահ առաքելություններում մասնակցության նախապատրաստման շրջանակում հուլիսի 15-24-ը Հայաստանում անցկացվում է «Արծիվ գործընկեր-2024» հայ-ամերիկյան համատեղ զորավարժություն:

Զորավարժությանը ներգրավված են ՀՀ ԶՈՒ խաղաղապահ բրիգադի, Եվրոպայում եւ Աֆրիկայում ԱՄՆ ցամաքային զորքերի եւ Կանզասի ազգային գվարդիայի զինծառայողները:

Զորավարժությունը ենթադրում է խաղաղապահ առաջադրանքների ընթացքում հակամարտող կողմերի միջեւ կայունացման գործողություններ:

Զորավարժության նպատակն է բարձրացնել միջազգային խաղաղապահ առաքելությունների մասնակցող ստորաբաժանման փոխգործակցելիության մակարդակը խաղաղապահ գործողությունների շրջանակում, իրականացնել կառավարման եւ մարտավարական հաղորդակցման լավագույն փորձի փոխանակում, ինչպես նաեւ բարձրացնել հայկական ստորաբաժանման պատրաստվածությունը:

Խաղաղապահ առաքելությունների նախապատրաստության շրջանակում միջազգային խաղաղապահ գործողությունների համար նախապատրաստվող ստորաբաժանումները պարբերաբար մասնակցում են նմանօրինակ համատեղ զորավարժությունների եւ վարժանքների գործընկեր երկրներում:

ԻՆՉ ԻՐԱՎԻՃԱԿ Է ԿԱՅԱՐԱՆՈՒՄ՝ ՀԵՂԵՂԻՑ ՀԵՏՈ

Երեկ (խմբ.) տեղացած հորդառատ անձրեւը աբսուրդային իրավիճակ էր ստեղծել Երեւանի մետրոյի «Շենգավիթի» կայարանում: Ուժեղ անձրեւը հեղեղել էր «Շենգավիթի» կայարանը, իսկ ներսում գտնվող մարդիկ մի կերպ փորձում էին դուրս գալ ամբողջությամբ ջրի տակ անցած մետրոյի կայարանից:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Շենգավիթ վարչական շրջանի ղեկավար Ռազմիկ Մկրտչյանը նշում է՝ հեղեղի պատճառը ջրատար խողովակների խափանումն է եղել. «Ծավալը մեծ է եղել ջրի, լավ հեղեղել է կայարանը, բայց շուտ կարգավորվել է խնդիրը: Մետրոյի աստիճանավանդակի ներքեւի հատվածում է եղել հեղեղը: Մեր աշխատակիցներն էլ այնտեղ են եղել, բայց, ֆիզիկական միջամտություն է եղել, թե խողովակի խցանումն է բացվել, չեմ կարող ասել, կարող է մի պահ խողովակը խցանվի, հետո դա կարգավորվի ու նորից ջուրը նորմալ տանի:

Ամբողջ քաղաքի ջրերը հավաքվում են ու գալիս Շենգավիթ. ամենացածրադիր հատվածն է, եթե Կենտրոնում կամ այլ վարչական շրջանում խցանում է լինում, ամբողջ կեղտը հետո Շենգավիթում է հավաքվել»:

Հարցին՝ ինքն անձամբ հեղեղից հետո գնացե՞լ է այնտեղ՝ հասկանալու իրավիճակը, եւ ինչ վնասներ են եղել՝ Շենգավիթի թաղապետն ասաց. «Ես չեմ գնացել, բայց մեր աշխատակիցներն այնտեղ են եղել, իսկ վնասների մասին մետրոյի ղեկավարությունից պետք է ճշտեք»:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԿՐԱԿՈՑՆԵՐ

ԻՆՉՈ՞Ւ Է ՈՐԴԻՆ ՀԱՇՎԵՀԱՐԴԱՐ ՍԿՍԵԼ

Հուլիսի 17-ին կրակոցներ, սպանություն, սպանության փորձի դեպք է տեղի ունեցել Գեղարքունիքի մարզում: Երեւան-Սեւան ավտոճանապարհի Սեւանի վարչական տարածքում գործող «Best Western Bohemian Resort» հանգստյան գոտում հնչած կրակոցներից սպանվել է ավագանու անդամ: Ինչ է եղել կրակոցի պատճառը:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ կրակոցների հետեւանքով սպանվել է Սեւանի ավագանու «Սարգիս Մուրադյան» դաշինքի անդամ Արսեն Աֆիյանը:

Ըստ նախաքննական մարմնի՝ ձեռնարկված միջոցառումների արդյունքում հիշյալ անձանց հրազենային վնասվածք պատճառելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով, Երեւան-Սեւան-Իջեւան ավտոճանապարհին հարակից հյուրանոցային համալիրի բակից ձերբակալվել եւ ոստիկանության բաժին են տեղափոխվել Գեղարքունիքի մարզի 19-ամյա եւ Տավուշի մարզի 40-ամյա բնակիչները:

19-ամյա ձերբակալվածը քրեական հեղինակություն Արա Բանդուրյանի որդին է՝ Լեւոն Բանդուրյանը, որի սենյակից հայտնաբերվել է զենք ու նրա հետ հյուրանոցի սենյակում է եղել եւս մեկ անձ, որը նրա ընկերն է:

Քրեական հեղինակություն Արա Բանդուրյանի որդին՝ Լեւոն Բանդուրյանը եւ 40-ամյա տղամարդը մի խումբ անձանց հետ հանգստանալիս են եղել Երեւան-Սեւան-Իջեւան ավտոճանապարհին հարակից հյուրանոցային համալիրում, որտեղ վիճաբանության մեջ են մտել նշված վայր հաճախած՝ Սեւան քաղաքի 37 բնակիչ, Աբովյան քաղաքի 41-ամյա բնակիչ տղամարդկանց եւ Երեւան քաղաքի 36-ամյա բնակիչ կնոջ հետ:

Վիճաբանությունը վերածվել է ծեծկռտուքի, որի ընթացքում հնչել են անկանոն կրակոցներ, ինչի հետեւանքով Սեւանի 37-ամյա, Աբովյանի 41-ամյա բնակիչները, ինչպես նաեւ նշված հյուրանոցային համալիրի անվտանգության 56-ամյա աշխատակիցը ստացել են հրազենային մարմնական վնասվածքներ:

Իսկ ինչն է եղել վիճաբանության բուն պատճառը:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած նախնական տեղեկությունների համաձայն՝ սպանված ավագանու անդամ Արսեն Աֆիյանը բարձր է խոսել հյուրանոցում ու նրան նկատողություն է արել քրեական հեղինակության որդին, ինչից էլ սկսվել թեժ խոսակցությունը ու կրակոցներ են հնչել:

Ավելի վաղ ՀՀ Քննչական կոմիտեն հայտնել էր.

«2024թ. հուլիսի 17-ին՝ «Սեւան ԲԿ» ՓԲ ընկերությունից ահազանգ է ստացվել այն մասին, որ հրազենային վնասվածքով, ներքին արյունահոսությամբ, իրենց մոտ բուժօգնության են տեղափոխվել Գեղարքունիքի մարզի 37 եւ 56-ամյա, ինչպես նաեւ Կոտայքի մարզի 41-ամյա բնակիչները:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում, հիշյալ անձանց հրազենային վնասվածք պատճառելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով, Երեւան-Սեւան-Իջեւան ավտոճանապարհին հարակից հյուրանոցային համալիրի բակից ձերբակալվել եւ ոստիկանության բաժին են տեղափոխվել Գեղարքունիքի մարզի 19-ամյա եւ Տավուշի մարզի 40-ամյա բնակիչները:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Սեւանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 44-155-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ եւ 12-րդ կետերով, 297-րդ հոդվածի 3-րդ մասով եւ 335-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնվել է քրեական վարույթ: 2024թ.-ի հուլիսի 18-ին՝ ժամը 06:40-ին, «Սեւան» ԲԿ-ից հայտնել են, որ Գեղարքունիքի մարզի 37-ամյա բնակիչը, որովայնի շրջանում ստացած հրազենային վնասվածքներից գիտակցության չգալով, մահացել է:

Վարույթն իրականացնող մարմնի կողմից որոշում է կայացվել՝ Գեղարքունիքի մարզի 19-ամյա եւ Տավուշի մարզի 40-ամյա բնակիչներին ձերբակալելու մասին:

Քրեական վարույթի շրջանակներում կատարված դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվել եւ առգրավվել են պարկուճներ, դեֆորմացված գնդակի նմանվող դետալներ, արնանման հետքեր, հայտնաբերվել եւ առգրավվել են նաեւ երկու ատրճանակներ՝ փամփշատուփում փամփուշտներով: Առգրավվել եւ զննության է ենթարկվել նաեւ հիշյալ դեպքը տեսանկարահանող սարքը:

Վարույթի շրջանակներում նշանակվել են դատաբժշկական, դիակի դատաբժշկական, դատաձգաբանական եւ դատաքիմիական փորձաքննություններ: Ոստիկանության համապատասխան ստորաբաժանմանը տրվել է քրեական վարույթի համար էական նշանակության հանգամանքներ պարզելու, ինչպես նաեւ տեղի ունեցած դեպքին մասնակից բոլոր անձանց հայտնաբերելու եւ քննությանը ներկայացնելու վերաբերյալ հանձնարարություն:

Նախաքննությունը շարունակվում է»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԳՈԼԴ ՀԱՄԱՐԱՆԻՇՆԵՐ

ՍԿԱՆԴԱԼԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ 000-ներով գոլդ համարանիշների աճուրդի շուրջ սկանդալը շարունակվում է:

Էլեկտրոնային աճուրդի արդյունքում հաղթող ճանաչված «ՆԱՄԲԵՐ ՈՒԱՆ» ՍՊ ընկերությունը եւս կներկայանա դատարան: Նկատի ունենալով, որ 23.02.2024 թվականին՝ ժամը 12:00-ին մեկնարկած տրանսպորտային միջոցների հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող 000 ՕՕ 01 համարանիշի էլեկտրոնային աճուրդի արդյունքում հաղթող է ճանաչվել «ՆԱՄԲԵՐ ՈՒԱՆ» ՍՊ ընկերությունը, նրա շահերը շոշափվելու են նշված գործով կայացվելիք դատական ակտով:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով Վարչական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ մասով՝ դատարանը որոշել է «ՆԱՄԲԵՐ ՈՒԱՆ» ՍՊ ընկերությանը գործի դատավարությունում ներգրավել որպես երրորդ անձ:

«Ժողովուրդ» օրաթերթը հայտնել էր, որ Դվին հյուրանոցային համալիր ՓԲԸ-ն մարտի 29-ին հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ու պահանջում է, որ ՀՀ վարչական դատարանը 23.02.2024 թվականին՝ ժամը 12:00-ին մեկնարկած տրանսպորտային միջոցների հաշվառման առանձնահատուկ պահանջարկ ունեցող 000 ՕՕ 01 համարանիշի օգտագործման իրավունքի աճուրդն անվավեր ճանաչի եւ «Դվին հյուրանոցային համալիր» ՓԲ ընկերությանը հաղթող ճանաչի:

Դատելով իրավիճակից՝ վերոնշյալ «գոլդ» համարի աճուրդ է կայացել ու Արտակ Թովմասյանին պատկանող «Դվին» հյուրանոցը մասնակցել է աճուրդին, սակայն չի հաղթել ու հիմա գործարարին պատկանող ընկերությունը ընկել է դատարանի դռները, ու «գոլդ» համարը իրենը դարձնելու «կռիվ է տալիս»:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ

ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական առաջին բաժնում ավարտվել է առողջությանը ծանր վնաս պատճառելու, խուլիգանություն, սպանության փորձ կատարելու հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

Իրականացված քննչական եւ վարութային գործողությունների արդյունքում պարզվել են դեպքի էական հանգամանքները:

Մասնավորապես՝ քննությամբ պարզվել է, որ Երեւան քաղաքում հաշվառված եւ փաստացի բնակվող 39-ամյա տղամարդը, 2024 թվականի մարտի 9-ին՝ ժամը 02:00-ի սահմաններում, Երեւան քաղաքի Վարդանանց փողոցում գործող ակումբում վիճաբանել է տուժողի՝ Երեւան քաղաքի 28-ամյա բնակչի հետ, ինչը վերաճել է քաշքշուկի: Դրա ընթացքում վերջինիս ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ, 39-ամյա տղամարդն իր մոտ նախապես պահվող սուր ծակող-կտրող առարկայով բազմաթիվ հարվածներ է հասցրել երիտասարդի կենսական նշանակության օրգանների՝ գլխի, որովայնի, դաստակի եւ ուսի հատվածներին: Սակայն ակումբի պահնորդական ծառայության աշխատակիցների միջամտությամբ նրա հանցավոր գործողությունների կանխման, շտապօգնության աշխատակիցների եւ հիվանդանոցում ցուցաբերված բժշկական միջամտության արդյունքում հաջողվել է փրկել 28-ամյա երիտասարդի կյանքը եւ հանցագործությունն ավարտին չի հասցվել:

Տուժողի ստացած մարմնական վնասվածքների մեխանիզմը, ծանրության աստիճանը պարզելու նպատակով նշանակված դատաբժշկական փորձաքննության եզրակացության համաձայն՝ մարմնական վնասվածքները, ըստ բժշկական փաստաթղթերի եւ օբյեկտիվ ուսումնասիրության տվյալների, հանդիսանում են կյանքի համար վտանգավոր:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ 39-ամյա տղամարդուն վերջնական մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 44-155-րդ հոդվածի 1-ին մասով: Որպես խափանման միջոց նրա նկատմամբ կիրառվել է այլընտրանքային խափանման միջոց տնային կալանք, գրավ եւ բացակայելու արգելք:

Նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը, մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են դատարան:

Ծանուցում. Հանցանքի համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հուլիսի 17-ից հուլիսի 18-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 120 դեպք որից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

«ՏԱՎՈՒՇ» ՁՕԸ ՏՆՕՐԵՆԸ ԴԱՏԱՊԱՐՏՎԵԼ Է

Յուրի Որսկանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 2017թ. փետրվարի 9-ին «Տավուշ» ՁՕԸ-ի վարչական խորհրդի նախագահի հետ կնքած թիվ 1 աշխատանքային պայմանագրի համաձայն, նշանակված լինելով «Տավուշ» ՁՕԸ-ի գործադիր տնօրենի պաշտոնում, օգտագործելով իր պաշտոնեական դիրքը, ունենալով ընկերության ֆինանսական միջոցները կառավարելու, ֆինանսական փաստաթղթերը ստորագրելու լիազորություն, 2017 թվականի ամռանը «Տավուշ» ՁՕԸ-ի կողմից Տավուշի մարզի Ոսկեվան բնակավայրում կառուցված 1032 մետր ընդհանուր երկարությամբ ոռոգման օժանդակ ջրագծի կապակցությամբ 2017 թվականի հոկտեմբերի 3-ին ներկայացրել է կատարողական ակտ, որի համաձայն՝ ջրագծի կառուցման համար հատկացվել է 6592000 ՀՀ դրամ. կատարողական ակտում նշված, սակայն փաստացի՝ չկատարված աշխատանքների ընդհանուր արժեքը կազմել է 460586,47 դրամ, նշված ջրագծի կառուցման կատարողական ակտում որպես իրականացված աշխատանք ներկայացվել է կատարվածից ավելի ծավալով եւ վատնել է 664799,65 դրամ՝ «Տավուշ» ՁՕԸ-ին պատճառելով խոշոր չափերի գույքային վնաս: 2024թ. ապրիլի 15-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Բերդի նստավայրում դատավոր Սամվել Մարդանյանը վճռել է ճանաչել եւ հռչակել Յուրի Սարգսի Որսկանյանի անմեղությունը 01.08.2003թ. ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին եւ 3-րդ կետերով, ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (Հենրիկ Աբելի Միրզոյանի դրվագով) եւ ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքների կատարման մեջ, Որսկանյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (Սամվել Սերյոժայի Սարգսյանի դրվագով), Յու. Որսկանյանին ազատել քրեական պատասխանատվությունից՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմքով, նրա նկատմամբ կիրառված խափանման միջոցը՝ ստորագրությունը չհեռանալու մասին եւ ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգում առկա սահմանահատումների վրա դրված արգելքը թողնել անփոփոխ՝ մինչեւ դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը, քաղաքացիական հայցը՝Յուրի Որսկանյանից, հօգուտ «Տավուշ» ՁՕԸ-ի 1.059.283,65 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին, բավարարել մասնակի՝Յուրի Որսկանյանից, հօգուտ «Տավուշ» ՁՕԸ-ի բռնագանձել 140.000 ՀՀ դրամ, որպես հանցագործությամբ պատճառված վնասի գումար»: Յուրի Որսկանյանի պաշտպանը վերաքննիչ բողոք է ներկայացրել՝ խնդրելով մասամբ բեկանել կամ փոփոխել Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 15.04.2024թ.-ի դատավճիռը: Ներկայում քրեական գործերով վերաքննիչ դատարանում այդ գործով նիստեր են կայանում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՆԳԻՍՏ

ՈՒՐ ԱՅՑԵԼԵԼ ԵՎ ԻՆՉ ՀԱՄՏԵՍԵԼ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ

Միջերկրածովյան ամենավառ երկրներից մեկը՝ արաբական միակ քրիստոնյա պետությունը, որի մայրաքաղաքը հայտնի է որպես արեւելքի Փարիզ, առանձնանում է իր տեսակով, բնույթով եւ մշակույթի ու ժամանցային վայրերի հետաքրքիր խառնուրդով:

Լիբանան. ահա թե որ երկիրն է գրավում բազմաթիվ զբոսաշրջիկների:

Եկեք միասին ճանապարհորդենք Լիբանանում եւ ուսումնասիրենք այն վայրերը, որտեղ պարտադիր պետք է սնվել՝ միաժամանակ խոսելով նրա մասին, թե ինչ պետք է փորձել՝ զգալու լիբանանյան խոհանոցի համը:

Լիբանանի «համը» զգալու համար պետք է ուտել լիբանանյան ուտելիքներ. անպայման եղեք Ժյունիի ծովափերում, որտեղ կարող եք վայելել Միջերկրական ծովի ձկնաշխարհը: Արեւելքի Փարիզի երեկոյան շունչը զգալու համար այցելեք Մար Մխայել. սա Բեյրութի ամենագունագեղ փողոցներից է, որը երեկոյան վերածվում է բացօթյա ժամանցային գոտու՝ երաժշտություն, խմիչք, լույսեր:

Հաջորդը Դբբայե գյուղն է, որը հիանալի վայր է երեկոյան ժամանցի համար: Եթե երեկոյան ժամանցի սիրահար եք, ապա հենց այստեղ կգտնեք կողք կողքի բազմաթիվ բարեր, փաբեր եւ ռեստորաններ, որտեղ կարելի է մինչեւ լույս ուրախանալ:

Պետք է անպայման այցելել հայկական Այնճար գյուղ եւ ճանապարհին մտնել Ծթորա գյուղի ագարակ՝ վայելելու լիբանանյան քամած մածունով բրդուճները (սենդվիչ): Եթե հասել եք Այնճար, ապա անպայման եղեք Բաալբեքի ավերակներում, որի մոտակայքում կարող եք ուտել տարածաշրջանին բնորոշ սֆիհաները. վստահեցնում ենք համը շատ երկար կուղեկցի Ձեզ:

Պաղպաղակի սիրահարները պետք է անպայման փորձեն գրեթե բոլոր խանութներում առկա սառույցե պաղպաղակները եւ, որ ամենակարեւորն է, արաբական «ծեծած» պաղպաղակը, որը պատված է պիստակով:

Պետք չէ մոռանալ Մար Մխայելում գտնվող «Frooza Booza» պաղպաղակի խանութի մասին, որտեղ կարելի է համտեսել տեղում պատրաստվող պաղպաղակ:

Եթե ցանկանում եք օրն ավարտել լիբանանցիների պես, ապա երկար երեկոյից ու վայելքներից հետո՝ կեսգիշերն անց, անպայման վայելեք «Sea Sweet» քաղցրավենիքի խանութի հայտնի պանիրով քնաֆեն: Եթե առաջին անգամ եք ուտելու, ապա նախընտրությունը տվեք կես հատին՝ հազիվ կարողանաք ավարտել այն:

Նախաճաշելիս ընտրեք արաբական եւ հենց բուն լիբանանյան խոհանոցին հատուկ սնունդ: Կարող եք փորձել «մանաիշ» կամ «ֆաթայեռ»: Առաջինը ձիթորոնի եւ համեմունքների խառնուրդից պատրաստված թխուկ է, որը պիցցայի տեսք ունի, իսկ երկրորդը՝ պանիրով պատրաստված թխուք: Ինչպես նաեւ պարտադիր փորձեք լիբանանյան «քա՛աք» հացիկները: Նախաճաշը կարելի է ամբողջական դարձնել մեխակով եւ դարչինով համեմված մեկ բաժակ սեւ թեյով, քամած մածունով, լոլիկով, վարունգով եւ տեղական թել-պանրով:

Լանչի համար կարող եք այցելել բուն լիբանանյան խոհանոց եւ փորձել «ֆուլ» (պատրաստվում է բակլայից) կամ «ֆաթթե» (պատրաստվում է սիսեռից եւ թահինից), որոնք հագեցնող եւ հետաքրքիր ուտեստներ են: Դրանից հետո՝ մինչեւ ուշ երեկո ուտելու ցանկություն չեք ունենա:

Ճաշելիս նախապատվությունը տվեք լիբանանյան խոհանոցի համեղագույն աղցաններից թաբբուլեին եւ ֆաթթուշին, նախուտեստներից՝ հմմոսին, մթաբբալին եւ միամմարային, յալանջիին (ձեթով, առանց մսի սարմա), պանիրով տապակված պյորեկներին եւ փաթաթա հառռային (թարգմանաբար՝ տաք կարտոֆիլ): Որպես հիմնական ճաշ կարող եք ընտրել քյուֆթեի տարբեր տեսակներ, շիշ թաուկ, քեբաբ՝ նախապատվությունը տվեք սմբուկով քեբաբին: Եթե ցանկանում եք սնվել արագ եւ մատչելի, ապա փորձեք իսկական արաբական լեհմեջուն կամ շաուրման. հավատացնում ենք արաբական որեւէ երկրում վերջիններս փորձելուց հետո կզգաք, որ առաջին անգամ եք ուտում:

Ընթրիքին կարող եք վայելել արաբական քաղցրեղեն՝ մահլաբիյե, եթե կաթի սիրահար չեք, ապա մի փորձեք, վերցրեք մղլի, որը պատրաստվում է բրնձի փոշուց եւ համեմունքներից, յուրահատուկ համ ունի, փորձեք նաեւ աշթա. կաթի սերից պատրաստված այս քաղցրը միայն արաբական աշխարհին է հատուկ կամ ընտրեք քնաֆե, որը պարզապես փորձել է պետք:

ՅՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՀԵՏԱՔՐՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ԹՈՒՆԱՎՈՐՄԱՆ ԴԵՊՔԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ

Հունիսի 6-ին Գորիսում թունավորվել էին 7 հոգանոց ընտանիքի բոլոր անդամները. 4-ամյա երեխան մահացել էր:

Առողջապահության նախարարությունից ավելի ուշ հայտնեցին, որ 7 հոգանոց ընտանիքից մկեը՝ 4-ամյա փոքրիկը, արդեն «կլինիկական մահ» ախտորոշմամբ է հիվանդանոց ընդունվել, 9-ամյա երեխան ռեանիմոբիլով տեղափոխվել է Երեւան՝ սկզբում «Սբ. Աստվածամայր» ԲԿ, ապա «Մուրացան» համալսարանական հիվանդանոց:

Երեկ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը հայտարարություն տարածեց, որում գրված է՝ լաբորատոր հետազոտության են հանձնվել ռուսական արտադրության սառեցված հավի սրունք, հավի մսով կոտլետ, կրակովսկի տեսակի երշիկ եւ ռուսական արտադրության ցորենի ալյուր սննդատեսակները:

Համաձայն փորձաքննության արդյունքների՝ բրոյլեր տեսակի սառեցված հավի սրունքի նմուշում հայտնաբերվել են ախտածին ա/թ սալմոնելաներ (արտադրող եւ մատակարար՝ «ՍՊԿ Կուրնիկով» ՍՊԸ, Սարատովի թռչնակոմբինատ, արտադրված 10.04.2024թ, պիտանիության ժամկետը՝ 10.01.2025թ.), իսկ «Հոմ ֆուդ» ապրանքանիշի հավի մսով կոտլետը ՄԱՖԱՆՄՔ (մեզոֆիլ աէրոբ եւ ֆակուլտատիվ անաէրոբ մանրէներ) ցուցանիշով չի համապատասխանել ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի պահանջներին (արտադրող՝Ա/Ձ Սամսոն Ավագյան, Սյունիքի մարզ, արտադրված 25.05.2024թ, պիտանիության ժամկետը՝ 120 օր):

Երեկ «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ՍԱՏՄ իրազեկման բաժնի պետ Անուշ Հարությունյանը ասաց՝ «հայտարարությունից ավել բան չեմ կարող ասել, միայն պիտի ասեմ, որ հենց նույն օրը, երբ եղել է ահազանգը, այդ օրն էլ ընտանիքի անդամներից ճշտել ենք, թե ինչ մթերք են գնել եւ այն որտեղից են գնել»:

Նրա խոսքով՝ նմուշներ են վերցվել, դրանք տարվել են լաբորատոր փորձաքննության, որոնց արդյունքները հրապարակվել են:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 11 պատահար. 1 մարդ զոհվել է, 18-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԱՐԺԱՆԱՑԵԼ Է Microsoft–Ի ՄՐՑԱՆԱԿԻ

Հայկական Web3 Compass ստարտափն արժանացել է Microsoft Startup Hub-ի 125.000 դոլար մրցանակի: Web3 Compass ծրագիրն աշխարհում web3 համակարգով աշխատող միակ եւ առաջին որոնողական համակարգն է, այն ստեղծել է հայկական Blockstars.tech ընկերությունը:

Պարզ ասած՝ W3C-ը Web3 որոնման համակարգ է: Հատկանշական է, որ այն նույնն է, ինչ ժամանակին Google-ը՝ Web2-ի համար: Նորարարական այս որոնողական համակարգը բոլորովին նոր խոսք է ոլորտում:

«Շատ ուրախ ենք ստանալու այս դրամական աջակցությունը: Այս աջակցությունը ոչ միայն մեր քրտնաջան աշխատանքի վկայությունն է, այլեւ խթան է տեխնոլոգիական սահմաններն ավելի առաջ մղելու մեր ձգտմանը»,-նշում են Blockstars.tech-ից:

Microsoft Startup Founders Hub-ի աջակցությունը Web3compass-ին հնարավորություն կտա արագացնել բարելավել իր տեխնոլոգիական ենթակառուցվածքը եւ ընդլայնել իր հասանելիությունը Web3 տարածքում: Որպես ստարտափ, որը նվիրված է առաջընթացի առաջխաղացմանը եւ ազդեցիկ լուծումներ ստեղծելուն, այս մրցանակն ամրապնդում է Web3compass-ի առաջատար դիրքը:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի (Համաշխարհային բանկ) միջեւ նախատեսվում է ստորագրել «Համընդհանուր առողջապահական ծածկույթի ծրագրի իրականացում» վարկային համաձայնագիրը, որով նախատեսվում է ՀՀ-ին տրամադրել 102 միլիոն եվրո արժողությամբ վարկ:

Կառավարության՝ հուլիսի 18-ի նիստին նախագիծը ներկայացրեց Առողջապահության նախարարի առաջին տեղակալ Լենա Նանուշյանը:

«Վարկային ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը առողջության համապարփակ ապահովագրության ներդրմանը, ինչպես նաեւ բարելավել առաջնային բժշկական օգնության որակը եւ իրագործումը, բարձրացնել երկրի առողջապահական ծախսերի արդյունավետությունը եւ նվազեցնել առողջապահական ծառայություններից օգտվելու ֆինանսական խոչընդոտները բնակչության շրջանում»,- ասաց Նանուշյանը:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ»



1

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀԱՄԱՊԱՐԱԿԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
30 ՀՈՒՆԻՍԻ 2024թ
ՅՈՒՆԻԲԻԶՆԵՍ ՎԿ ՓԲԸ ՀՀ ք. ԵՐԵՎԱՆ 0010, ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ 1
(վարկային կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը)

(հազ. դրամ)

Անվանումը	Հաշվետու ժամանակաշրջան 01.04.24-30.06.24	Նախորդ տարվա նույն ժամանակաշրջան 01.04.23-30.06.23	Հաշվետու տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը 01.01.23-30.06.23	Նախորդ տարվա սկզբից մինչև նախորդ տարվա նույն ժամանակաշրջանը 01.01.23-30.06.23
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	2,894	3,679	6,044	7,826
Տոկոսային և նմանատիպ ծախսեր				
Զուտ տոկոսային եկամուտ	**2,894**	**3,679**	**6,044**	**7,826**
Շահաբաժնի տեսքով եկամուտներ				
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ				135
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	(44)		(68)	(8)
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ	**(44)**	**-**	**(68)**	**127**
Շահույթ-վնասով վերադասվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներից զուտ շահույթ/(վնաս)				
Վաճառքի համար նախատեսված ներդրումներից զուտ շահույթ/(վնաս)				
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներից զուտ շահույթ/(վնաս)				
Արտարժութային գործարքներից ստացված զուտ շահույթ/(վնաս)				
Այլ գործառնական եկամուտ			452	41
Գործառնական եկամուտ	**2,850**	**3,679**	**6,428**	**7,994**
Վարկերից և այլ փոխառություններից առաջացած կորուստներ	6	(1,577)	3,221	(1,155)
Ընդհանուր վարչական ծախսեր	(3,442)	(2,700)	(6,978)	(5,806)
Այլ գործառնական ծախսեր	(264)	(227)	(470)	(356)
Շահույթ մինչև հարկվելը	**(850)**	**(825)**	**2,201**	**677**
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	-	-	-	-
Շահույթ հարկումից հետո	**(850)**	**(825)**	**2,201**	**677**
Մեկ բաժնետոմսին ընկնող բազային շահույթ				
Մեկ բաժնետոմսին ընկնող նոսրացված շահույթ				

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 08.07.2024թ.

Վարկային կազմակերպության ղեկավարի նախագահ (գործադիր տնօրեն) Գուրգեն Ղուկասյան

2

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (ՁԼ 7)
30 ՀՈՒՆԻՍԻ 2024թ
ՅՈՒՆԻԲԻԶՆԵՍ ՎԿ ՓԲԸ ՀՀ ք. ԵՐԵՎԱՆ 0010, ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ 1
(վարկային կազմակերպության անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ տարվա վերջ
1	***Ակտիվներ***		
1.1	Դրամական միջոցներ և բանկերի հաշիվներ	852	9,988
1.2	Շահույթ-վնասով վերադասվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ		
1.3	Բանկերում տեղաբաշխված միջոցներ	129,776	93,167
1.4	Դրամական շուկայում այլ տեղաբաշխումներ		
1.5	Հանձնարարագրերին տրված փոխներ և այլ փոխառություններ (շիֆրից)		25,325
1.6	Վաճառքի համար նախատեսված ներդրումներ		
1.7	Այլ գործառնությունների գծով ստացվիք գումարներ		
1.8	Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ		
1.9	Վարձակալության գծով ստացվիք գումարներ		
1.10	Ներդրումներ այլ անձանց կոնսոլիդացիոն կապիտալում		
1.11	Կապիտալ ներդրումներ բանկի հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում		
1.12	Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	3,712	4,025
1.13	Հետազոտված հարկային ակտիվներ		
1.14	Ստացվիք տոկոսներ		
1.15	Այլ ակտիվներ	1,975	1,385
	Ընդամենը՝ ակտիվներ	**136,265**	**133,890**
2	***Պարտավորություններ***		
2.1	Բանկերից ստացված փոխառություններ և փոխներ	-	
2.2	Դրամական շուկայից ստացված այլ փոխառություններ	-	
2.3	Հանձնարարագրերից ներգրավված փոխառություններ	-	
2.4	Պարտավորություններ ՀՀ կառավարության եկամտահարկ	97	145
2.5	Վարձակալության գծով վճարվիք գումարներ	-	
2.6	Վարկային կազմակերպության կողմից թողարկված արժեթղթեր	-	
2.7	Պահուստներ	-	
2.8	Վճարվիք գումարներ	-	-
2.9	Հետազոտված հարկային պարտավորություններ	568	569
2.10	Վճարվիք տոկոսներ		
2.11	Այլ պարտավորություններ	1,883	1,661
	Ընդամենը՝ Պարտավորություններ	**2,548**	**2,375**
3	***Կապիտալ***		
3.1	Կանոնադրական կապիտալ	120,000	120,000
3.2	Պահուստներ՝	**8,183**	**8,183**
3.2.1	Պլիսվոր պահուստ	3,017	3,017
3.2.2	Վերգահահատման պահուստ	5,166	5,166
3.4	Կուտակված շահույթ	5,534	3,332
	Ընդամենը՝ Կապիտալ	**133,717**	**131,515**
	Ընդամենը՝ Պարտավորություններ և կապիտալ	**136,265**	**133,890**

Հաշվետվության վավերացման ամսաթիվը 08.07.2024թ.
Վարկային կազմակերպության ղեկավարի տնօրեն Գուրգեն Ղուկասյան
(գործադիր տնօրեն)

3

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
30 ՀՈՒՆԻՍԻ 2024թ
ՅՈՒՆԻԲԻԶՆԵՍ ՎԿ ՓԲԸ ՀՀ ք. ԵՐԵՎԱՆ 0010, ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ 1
(Գումարները նշվում են հազար դրամով)

Տողերի անվանումներ	Տողերի համարներ	Ընթացիկ տարվա հաշվետու ամսաթիվը	Նախորդ տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը
Գործառնական գործունեության դրամական հոսքեր (գործառնական գործունեության դրամական հոսքերի մասին հաշվետվություն)			
Գործառնական գործունեության դրամական հոսքերի մասին հաշվետվության տվյալներ

ՆՈՐ ՏԵՍԱՀՈԼՈՎԱԿԻ ՄԱՍԻՆ

«ՎՈԿԱԼԱՅԻՆ ԼԱՎ ՏՎՅԱԼՆԵՐ ՈՒՆԵՄ». Լ. ՄՈՐՏՈ

Երգչուհի, դերասանուհի Լիլի Մորտոն օրերս ներկայացրել է իր նոր՝ «Chika Chika» անվանումով տեսահոլովակը: Լիլին «Ժողովուրդ» օրաթերթին տրամադրել է լուսանկարներ նկարահանման հրապարակից եւ պատմել է՝ ինչպես են աշխատել այս տեսահոլովակի համար:

«Կրկին ռուսերենով եմ երգը ներկայացրել, քանի որ ունեմ բացառապես ռուսերենով ձայնագրված երկու ալբոմ: Ես եւ ամուսինս՝ Վադիմը, ով նաեւ իմ պրոդյուսերն է, ալբոմները լսարանի դատին հանձնելու որոշում ենք կայացրել: Իհարկե, ոչ բոլորը կունենան տեսահոլովակ, բայց այս մեկը պարային էր, կարծում եմ, որ կսիրվի: Ի վերջո, փորձը ցույց է տվել, որ բոլոր երգերս սիրվում են: Այդ մասին փաստում են դիտումները եւ նամակները, որոնք գրեթե ամեն օր ստանում եմ իմ երկրպագուներից», - ասաց Լիլին:

Նրա խոսքով՝ այս անգամ էլ աշխատել է ռուս մասնագետների հետ, թեպետ տեսահոլովակը նկարահանել են ԱՄՆ-ում:

«Իմ կարծիքով ռուս մասնագետները շատ լավ են զգում այս երգերի տրամադրությունը: Վստահում եմ նրանց, իսկ արդյունքից շատ գոհ եմ մնում: Առհասարակ, միջազգային աշխատանք ստացանք. տեսահոլովակում նկարահանվել են տարբեր ազգերի գեղեցիկ աղջիկներ: Շատ վառ ու հետաքրքիր աշխատանք ենք ստացել, ինչպես արդեն հասկացել եք՝ չեմ վախենում նորովի հանդես գալուց»:

Լիլին զրույցի ընթացքում նշեց, որ երգին եւ երաժշտությանը շատ լուրջ է վերաբերվում:

«Արդեն երկու տարուց ավելի է, որ գրեթե ամեն օր մասնագետների հետ մշակում ենք ձայնս: Դա անում ենք վոկալի ուսուցչուհիների օգնությամբ, ցանկանում եմ ավելի կատարելագործվել, փորձում եմ տարբեր մասնագետների օգնությամբ ամեն ինչ սովորել, ամեն բան իմանալ: Այնպես է, որ ես վոկալային լավ տվյալներ ունեմ, պարզապես այսպիսի երգեր եմ ներկայացնում, քանի որ «թեթեւ» երգերը հիմա շատ արդի են, խաղարկային երգերը սիրվում են երիտասարդների, երեխաների կողմից: Դրանք ինձ էլ են շատ դուր գալիս, բայց ալբոմում ունեմ երգեր, որոնց շնորհիվ վոկալային տվյալներս եմ ցույց տվել: Այդ երգերի շնորհիվ մարդիկ գոնե որոշ չափով կհասկանան, թե ես ինչպես եմ երգում, ինչ վոկալային տվյալներ ունեմ: Ցանկացած ճաշակի տեր մարդ էլ կարող է իր հոգուն հարազատ մոտ երգ գտնել իմ ալբոմների մեջ»:

Լիլին նաեւ հավելեց, որ ամուսինը շատ է աջակցում իրեն, միասին աշխատում են բոլոր դետալների վրա, նույնիսկ միասին բեմական համարձակ կերպարներն են ընտրում:

«Միասին հասկանում ենք՝ ինչը պետք է փոխենք, այդ թվում՝ թե՛ ձայնի, թե՛ խոսքերի մեջ, տեսահոլովակի սցենարն էլ ենք միասին որոշում: Շատ երջանիկ կին եմ, քանի որ ամեն հարցում նա իմ կողքին է: Ինչ վերաբերում է բեմական համարձակ կերպարներիս, պետք է խոստովանեմ, որ այնպես չէ, որ մինչեւ բեմ դուրս գալն իմ կերպարները վառ չէին, որովհետեւ ես ինձ որքան հիշում եմ՝ թե՛ փոքր տարիքում, թե՛ դպրոցական տարիներին, թե՛ համալսարանական տարիներին, միշտ սիրել եմ տարբերվել բոլորից, լինել վառ կերպարներով: Ավելին՝ ինքս ինձ համար հագուստներ եմ կարել, կերպարներ ընտրել, իսկ այսօր ամուսինս աջակցում է նաեւ այս հարցում՝ ընդունելով ինձ այնպիսին, ինչպիսին ես կամ: Խանդելը, իհարկե, խանդում է. կարծում եմ, որ եթե մի օր հասկանամ, որ կողակիցս ինձ չի խանդում, ուրեմն՝ նրան այլեւս անհետաքրքիր եմ: Ընդգծեմ նաեւ, որ ես երբեւէ խանդելու որեւէ առիթ չեմ տալիս, մենք միմյանց շատ վստահում եւ հավատում ենք», - եզրափակեց երգչուհին:

ՀՈՒՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՅ ՋԱՀԱԿԻՐ ՄԱՐԶԻԿԸ

Հուլիսի 17-ին Էլմիրա Կարապետյանը պատմություն է կերտել՝ դառնալով Հայաստանի Հանրապետությունը ներկայացնող առաջին մարզիկը, ով մասնակցել է օլիմպիական կրակի փոխանցման վազքին՝ դառնալով ջահակիր երկրորդ հայ մարզիկը պատմության մեջ:

Առաջին անգամ հայ մարզիկը մասնակցել է ջահի փոխանցման արարողությանը 40 տարի առաջ՝ 1984 թվականին Լոս Անջելեսում կայացած ամառային օլիմպիական խաղերի ժամանակ: Սակայն Կարապետյանը Հայաստանի Հանրապետությունը ներկայացնող առաջին ջահակիրն է, ինչը պատմական իրադարձություն է:

Հայ օլիմպիական հրաձիգ Էլմիրա Կարապետյանը Եվրոպայի առաջնության բրոնզե մեդալակիր է, Եվրոպական խաղերի փոխչեմպիոն, աշխարհի գավաթակիր:

2024 թվականի Փարիզի ամառային օլիմպիական խաղերը կմեկնարկեն հուլիսի 26-ին եւ կշարունակվեն մինչեւ 2024 թվականի օգոստոսի 11-ը: Փարիզը գլխավոր հյուրընկալող քաղաքն է, իսկ խաղերն անց են կացվելու Ֆրանսիայի 16 այլ քաղաքներում: Փարիզի Օլիմպիական խաղերին կկայանան 32 մարզաձեւերի մրցումներ եւ մեդալներ կստանան 329 մարզիկներ:

Օլիմպիական խաղերում Հայաստանը կներկայացնեն 15 մարզիկներ, որոնք հանդես կգան 7 մարզաձեւերում:

Հուլիսի 26-ին կայանալիք բացման արարողությանը Հայաստանի դրոշակակիրը կլինի բռնցքամարտիկ Դավիթ Չալոյանը:

«Փարիզ 2024» Օլիմպիական խաղերում Հայաստանը ներկայացնող մարզիկներն են.

- Հրաձիգ՝ Էլմիրա Կարապետյան
- Մարմնամարզիկներ՝ Արթուր Դավթյան, Վահագն Դավթյան
- Ազատ ոճի ըմբիշներ՝ Վազգեն Թեւանյան, Արսեն Հարությունյան
- Բռնցքամարտիկ՝ Դավիթ Չալոյան
- Հունահռոմեական ոճի ըմբիշներ՝ Արթուր Ալեքսանյան, Մալխաս Ամոյան, Սլավիկ Գալստյան
- Ծանրորդներ՝ Վարազդատ Լալայան, Գարիկ Կարապետյան, Անդրանիկ Կարապետյան
- Լողորդներ՝ Արթուր Բարսեղյան, Վարսենիկ Մանուչարյան
- Մարզիկ (աթլետ)՝ Երվանդ Մկրտչյան

Սա կլինի Հայաստանի ութերորդ անընդմեջ ելույթը ամառային օլիմպիական խաղերում հետխորհրդային ժամանակաշրջանում:

ՓԱՌԱՏՈՆ

ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ «ԼԱՎԱՇԻ ԿԱԽԱՐԴԱՆՔԸ»

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության ֆինանսական աջակցությամբ «Արդինի» կրթամշակութային եւ տուրիզմի զարգացման հիմնադրամը հուլիսի 21-ին Շիրակի մարզի Արեւիկ գյուղում կանցկացնի «Լավաշի կախարդանքը» փառատոնը:

«Լավաշի կախարդանքը» փառատոնն առաջին անգամ անցկացվել է 2023 թվականին: Այս տարի փառատոնը նվիրվում է հայկական լավաշ թխելու ավանդույթը 2014 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկում գրանցելու 10-ամյակին:

Փառատոնի ընթացքում տեղի կունենան տարբեր մշակութային միջոցառումներ՝ լավաշի թեմայով բեմականացում եւ գեղանկարների ցուցահանդես, պատ-գեղանկարի (սթրիթ արտ) ստեղծում, կարպետագործության եւ ուլունքագործության վարպետաց դասեր, Գյումրու հուշանվեր-դռների պատրաստում, երեխաների համար՝ կավճանկարչություն եւ երաժշտություն՝ նորաստեղծ «Ֆոլկատիկ» բենդի կատարմամբ:

Գյուղական մթերքներով լի տաղավարները կներկայացնեն ոչ միայն Արեւիկ, այլեւ հարակից գյուղերը՝ Շիրակի մարզի Հայկավան, Հացիկ, Փոքրաշեն, Կարմրաքար, Բաշգյուղ: Տեղի կունենա լավաշի եւ այլ ուտեստների համտես, կներկայացվի նաեւ արցախյան խոհանոցը:

Փառատոնի հիմնական նպատակը Արեւիկ համայնքի լավաշի թխման ավանդույթի վերարժեւորումն ու հանրահռչակումն է, ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության եւ իրազեկման միջոցով համայնքային կյանքի աշխուժացումը, գաստրո, էթնո եւ էկո զբոսաշրջության զարգացման խթանումը:

Նշենք, որ փառատոնի առանցքում եւ գյուղը, եւ փառաբանման առարկան՝ լավաշը, պատահական չեն ընտրվել:

Արեւիկը դեռեւս խորհրդային տարիներից հռչակված է եղել հացթուխներով եւ կարմրահատ ցորենից թխվող լավաշով, ուստի փառատոնի հիմնական ուղերձը թոնրում ավանդական եղանակով թխվող լավաշ հացի փառաբանումն է: 2023 թվականին պատ-գեղանկարի միջոցով Արեւիկ համայնքի մանկապարտեզի պատին պատկերվել է Գ. Խանջյանի «Հացը լեռներում» կտավը:

● Հուլիսի 26-ին՝ ժամը 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում կցուցադրվի «Ջավեշտալի կատակերգություն...» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2000-3000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ պատասխանատվություն է սահմանված հրդեհային անվտանգության կանոնները խախտելու կամ չկատարելու համար:

Իվան Դանիելյան (31 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հրդեհային անվտանգության կանոնները խախտելու կամ չկատարելու համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 187-րդ հոդվածով սահմանված է պատասխանատվություն, այն է՝

հիմնարկներում, կազմակերպություններում, կոլտնտեսություններում, հասարակական վայրերում, պահեստային շենքերում, հանրակացարաններում եւ բնակելի տներում, ինչպես նաեւ համապատասխան օբյեկտներ նախագծելիս եւ կառուցելիս հրդեհային անվտանգության կանոնները խախտելը կամ չկատարելը կամ հակահրդեհային գույքի, սարքավորումների, հրդեհները հայտնաբերելու եւ հանգցնելու ավտոմատ միջոցների օգտագործման ու պահպանության կանոնները խախտելը

-առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգապատիկից հինսապատիկի չափով:

Սույն հոդվածի առաջին մասի դիսպոզիցիայում նշված խախտումները վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը

-առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինսապատիկից հարյուրհինսապատիկի չափով:

Պետական հրդեհային եւ տեխնիկական անվտանգության տեսչության պաշտոնատար անձանց կողմից տրված կարգադրագրերում նշված ժամկետում թույլ տրված հրդեհային անվտանգության կանոնների խախտումները չվերացնելը

-առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրհինսապատիկի չափով:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ արտադրական վտանգավոր օբյեկտը ռեեստրում գրանցման չներկայացնելն ու տեխնիկական անվտանգության փորձաքննություն չանցկացնելն առաջացնում են տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով (այսինքն՝ մեկ միլիոն դրամ):

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ե՞րբ կարող է ուսուցիչը դիմել տարակարգ ստանալու համար:

Հասմիկ Սիրեկանյան (27 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. ««Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2022 թ. փետրվարի 9-ի ՀՕ-35-Ն օրենքը ուժի մեջ է մտել 2022 թ. մարտի 3-ից, որով սահմանվել են փոփոխություններ նաեւ ուսուցիչների տարակարգի շնորհման գործընթացում:

Համաձայն վերոգրյալ օրենքի պահանջների՝ մարտի 3-ից սկսած՝ տարակարգի շնորհման գործընթացը կիրականացվի կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից օրենքով սահմանված ենթաօրենսդրական իրավական ակտն ընդունելուց հետո, որով կսահմանվեն տարակարգի շնորհման համար ուսուցչի մասնագիտական չափանիշները:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է հետեւել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության կայքէջին եւ տարակարգի շնորհման համար դիմում ներկայացնել ենթաօրենսդրական իրավական ակտի ընդունումից հետո:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». 2021-2022 ուսումնական տարվանից հանրակրթական ուսումնական հաստատության պետական ավարտական փաստաթուղթը տրվելու է էլեկտրոնային եղանակով: Ավարտական փաստաթղթի նմուշը հաստատվել է ՀՀ կառավարության 2000 թվականի հունիսի 15-ի N320 որոշմամբ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Երեկ երեկոյան՝ ժամը 18:00-ին, Հայաստանի նկարիչների միությունում տեղի ունեցավ Հաղթանակ Շահումյանի 80-ամյակին նվիրված ցուցահանդեսը՝ Արվեստը ժամանակի սահմաններից դուրս խորագրով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+11+ 16 +27 + 30
Կոտայքի լեռներ	+ 10 + 13 +24 + 27
Կոտայքի նախալեռներ	+ 18 + 21 +30 + 33
Գեղարքունիք	+ 7 + 11 +24 + 28
Լոռի	+ 9 + 14 +25 + 28
Տավուշ	+ 14 + 19 +29 + 33
Արագածոտնի լեռներ	+ 7 + 9 +23 + 27
Արագածոտնի նախալեռներ	+16 + 20 +29 + 33

Արարատ	+ 19 + 21 +34 + 36
Արմավիր	+ 18 + 20 +34 + 36
Վայոց ձորի լեռներ	+ 8 + 10 +24 + 27
Վայոց ձորի նախալեռներ	+ 17 + 19 +33 + 35
Սյունիքի հովիտներ	+ 18 + 21 +31 + 34
Սյունիքի նախալեռներ	+ 12 + 16 +25 + 28
ԼՂՀ	+ 12 + 15 +24 + 26
Երեւան	+ 19 + 22 + 32 + 35

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **18.7.2024**
Հասցեն՝ Գերադրունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*